ՂԱՐԱԲԱՂԻ ԽԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՑՈՒՄԸ

Բաղդասարյան Ն. (Մեսրոպ Մաշտոց Համալսարան, ԼՂՀ)
nelli.ohanjanyan@mail.ru

Բանալի բառեր՝ խանական վարչակարգ, պայմանագիր, խան, ցարիզմ:

Ձեկուցման թեման արդիական և հրատապ է հակառակորդ պետության՝ Ադրբեջանի կողմից իրական պատմության խեղաթյուրման պայմաններում: Թեմայի լուսաբանումը կատարվել է պատմագիտական ուսումնասիրությունների, փաստաթղթերի ժողովածուների, ինչպես նաև նորահայտ վավերագրերի օգնությամբ և միտում ունի ներկայացնել Արցախի պատմության համապատասխան ժամանակաշրջանի քաղաքական անցուդարձը:

1804-1813 թթ. ռուս-պարսկական պատերազմի ավարտին՝ 1813 թ. հոկտեմբերի 12-ին, Ղարաբաղի Գյուլիստան բերդավանում կնքված պայմանագրով Ղարաբաղի պարսկական հպատակությունը փոխարինվեց ռուսականով: Իր դրական հետևանքներով հանդերձ Գյուլիստանի պայմանագիրը չարդարացրեց արցախահայության՝ խանական վարչակարգին վերջ դնելու ակնկալիքը: Ավելին՝ ցարիզմն այս վարչակարգի մեջ ամուր հենարան տեսավ իր գաղութային քաղաքականությունը ծավալելու նախնական փուլում: Ցարիզմը պահպանեց խանական խամաճիկային վարչակարգը, ինչը վերացվեց միայն այն պահին, երբ կայսրությունն իրեն բավականաչափ ապահով էր զգում հպատակ տիրույթներում:

1816 թ. Կովկասի կառավարչապետ նշանակված գեներալ Ալեքսեյ Երմոլովը, Կովկաս ժամանելուն պես տեսնում է խանական վարչակարգի վերացման անհրաժեշտությունը, որում նա համոզվում է, երբ 1816 թ. մեկնում է Ղարաբաղի պարսկական սահման: Ա. Երմոլովի հաշվարկներով Ղարաբաղի խանությունից սպասվում էր տարեկան մինչև 1 մլն. ռուբլի՝ արծաթով եկամուտ, որը ստանալը հնարավոր էր խանական վարչաձևի տապալումից հետո:

Հատկանշական է, որ խանական վարչակարգի վերացման հարցն առավել սուր տեսք ստացավ Մեհտի Ղուլի խանի պահվածքի պատճառով: Ղարաբաղը դիտելով որպես իր անձեռնմխելի սեփականություն՝ խանը հիվանդագին էր վերաբերվում ռուսական կառավարության կողմից կատարվող ցանկացած միջամտության: 1822 թ. վիճակագրությանը խոչընդոտելը ճակատագրական նշանակություն ունեցավ Մեհտի Ղուլի խանի համար: Վիճակագրության հետ կապված դեպքերին վերաբերող փաստաթղթերը ցույց են տվել, որ Մեհտի Ղուլին այնքան ինքնահաստատ էր զգում Ղարաբաղում, որ փորձում էր հակառակվել անգամ ցարական պաշտոնական կարգադրություններին: Բնականաբար, ցարական կառավարությանը անհաճո էր ի դեմ Մեհտի Ղուլիի որպես Ղարաբաղի խան ունենալու իրողությունը: Դրան գումարվել էր նաև ներքին գործոնը՝ նոր հողեր ստացած տեղական իշխողների երկյուղը. գինեմոլ խանը վատ հիշողություն ուներ և երեկվա տված թուղթը կարող էր վաղն ուրանալ, ուստի նրա հեռացումը պարզապես անհրաժեշտություն էր: Վերոնշյալ և մի շարք այլ հանգամանքների պատճառով խանը 1822 թ. նոյեմբերին խուճապահար փախչում է Պարսկաստան:

Մեհտի Ղուլի խանի փախուստից հետո Ա. Երմոլովը դիմում է Ղարաբաղի ժողովրդին՝ հայտարարելով խանական կառավարման մեկընդմիշտ վերացման մասին: 1822 թ. աշնանը Ա. Երմոլովը լինում է Ղարաբաղում: Նրա ներկայությամբ Շուշիում բացվում է դիվան (գավառային դատարան), ազդարարվում է ռուսական վարչակարգի մուտքը, և ժողովուրդը հավատարմության երդում է տալիս ռուսական կայսերը: Արդեն 1822 թ. դեկտեմբերի 14-ին Ա. Երմոլովն Ալեքսանդր Ի-ին ուղղված զեկույցում գրում է կառավարման նախկին «անառակ» ձևի փոխարեն Ղարաբաղում ռուսական կառավարում մտցնելու և խանի փախուստի պատճառների մասին:

Այսպիսով, 1822 թ. Ղարաբաղում վերջ է դրվում դեռ նախորդ դարի կեսերին սկիզբ դրված հայ իրականությանը խորթ խանական

կառավարմանը: Խանական վարչակարգին փոխարինելու եկած ռուսական վարչակարգի գլխավոր խնդիրը Ղարաբաղի գաղութացումն էր:

ABOLITION OF KARABAKHY KHANATE

Baghdasaryan N. (Mesrop Mashtots University, Nagorno Karabakh Republic)